

ՀԱՅ ՏՈՒՄ

REVUE MENSUELLE

1 Janvier 1935 No. 12 5eme Année

Ե ՏՈՒՄ ԹԻՒ 12 1 ՓԵՏԲՈՒՆԻ 1935

Հ Ա Յ Ս Կ Ա Ո Ւ Տ

Պատկերազարդ ամսաթերթ

Պաշտօնաթերթ Հ. Մ. Ը. Մ. Ի և Սկաուտներու

Հ ի մ ն ու ա ծ 1918 - ի ն

Նամակ, յօդուած, նկար, բերթ, գիրք և դրամ դրկել՝

JIRAIR MINTANDJIAN Ի

55, Rue de Maux, PARIS (19e)

HAI SCOUT

Revue mensuelle

Organe de l'Union générale arménienne de scoutisme

Fondée en 1918

Rédaction et Administration 55, Rue de Meaux, Paris-XIX

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻ (ԿԱՆՆԵԻԿ)

Ֆրանսա Սուրիա, Պալֆաններ	20 ֆր.
Ուրիշ երկիրներ	30 ֆր.
Սկաուտական բոլոր հիւղերու անդամներուն ՊԱՐՏԱԻՈՐԶ	15 ֆր.
Զեռֆէ հատը	2 ֆր.

ՖՐԱՆՍԱ MARSEILLE (B.-du-R.) — M. Papazian, 5, Rue de l'Obélisque.

PARIS — G. Nigolian, 144, Boulevard Magenta.

VIENNE (Isère) — Dikranian, 132, Rue Lafayette.

ST-MAURICE DE BAYNOST (Ain) — H. Baghdikian.

LYON (Rhône) — S. Melkonian, 6 bis, Rue de la Bannière.

NICE (A. M.) — G. Iprassanian, 198, Bld. de la Madeleine.

ՊՐԱԳԻԼԻՍ SAO PAULO — K. Tuffenkdjian, Rua Santo André № 36.

ՄԻԱՑՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐ

CHICAGO (Ill.) — Y. Andelian, c/o Rug Renovating Co., 818, North Av., Oak - Park.

NEW - YORK — A.G.A.V., 946, Madison Av.

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ATHENES & PIREE — Sapritchian, Odosse Kapodistriov, № 7, Pirée.

SALONIQUE — V. Archayir, c/o Boyadjian, Rue Ermon, № 2.

ՍՈՒՐԻԱ BEYROUTH — Comité Régional, B. P. 724.

ALEP — N. Tuysisian, Han Gœmruk.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ TAVRIS — Kh. Krikorian, Lilava.

ԵԳԻՊՏՈՍ ALEXANDRIE — U.G.C.P., c/o B. M. Babikian, 33, R. France.

ՊՈՒԼԿԱՐԻՍ SOFIA — V. Varnadjian, Banque Traguia, Bezesten - Bali.

ՌՈՒՄԵՆԻԱ BUCAREST — Comité Régional, c/o M. Sirouni, 8, R. Vazelov.

ՀՆԴԿԱՍՏԱՆ

CALCUTTA — E. V. Garapied, Armenian College, 4, Kyd Street.

BOMBAY — O. Basmadjian, Poste Restante.

Միւս բոլոր երկիրներու մէջ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՈՒՅԻՈՎ, գործակալներու պէտք
կայ :

Տ ԱՅ ԱԿԱՌԻՄ

ԲԱՐՁՐԱՑԻՐ



ԲԱՐՁՐԱՑՈՒՐ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Է.Մ.Ը.Մ.Ի ԵՒ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԸՆԻՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Ե. Տարի Թիւ 12 1 Փետրուար | 1935 | 1 Février 5^{me} Année N^o 12



ԱՆԿԵՂՏԽՕՍԷ՛

Այս երկու պատուան
դաններէն որուն վրայ
կեցած ես

Ձախ կողմինը հաստա
տուն հիմնը ունի, իսկ
աջ կողմինը անապա -
հով է եւ քու անկումիդ
պատճառ պիտի ըլլայ:



323-2000

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԽՕՄԲԸ

Առաջին մտածումը որ մարդուս մտքին մէջ կը ծնի « պատուանդան » բառին առջեւ, այն է թէ՛ անիկա ո եւ է մէկու մը համար դիրք մըն է, որուն վրայ իւրաքանչիւր անձ պէտք է ելլէ, որպէս զի ամբողջ աշխարհ կարենայ զինքը տեսնել: Այս դադափարը բաւական ճիշդ է, սակայն պէտք է նկատողութեան տոնել թէ՛ երկու տեսակ պատուանդաններ գոյութիւն ունին: Բայց դժբախտաբար մեզմէ քիչեր կրցած են հասկնալ թէ ամէնքս ալ մեր կարգին պատուանդաններու վրայ բարձրացած ենք: Տասնըհինգ տարի առաջ երբ դեռ Սկառուռքեան փորձառութիւնը չունէինք, մեր կազմակերպութեան նշանաւոր պետերէն մէկը ըսած է, այն ժամանակուայ խմբապետներուն, որ պէտք է ծայր աստիճան ուշադիր ըլլան իրենց շարժումներուն մէջ, որովհետեւ, սկառուռները զիրենք շատ մօտէն կը քննեն եւ իրենց ըրածները նոյնութեամբ կ'իրացնեն, կապիկներու (պանտար — լօկ) խմբակի մը նման: Երբ դեռ դպրոցական տղայ էինք մեր ուսուցիչը միշտ կը կրկնէր թէ, ազատ էինք կրկնել այն ամէն բանը զոր պիտի տեսնէինք իրմէ. եւ ամէնքս ալ ուշադիր կը հետեւէինք մեր ուսուցիչին իւրաքանչիւր քայլին, որպէս զի կարող ըլլայինք բռնել զինքը այնպիսի արարքի մը մէջ, որ ան պէտք չէր ընել. միակ նպատակաւ որ երբ անկանոն ընթացքի մը մէջ բռնուէինք, կարենայինք ինքզինքնիս արդարացնել իրեն ըրած որ եւ է մէկ սխալը հրապարակելով:

Հիմա վերոյիշեալ սկառուռ — պետը եւ ուսուցիչը՝ երկուքն ալ պատուանդանի վրայ կեցած են: Բնականաբար տղաքը պիտի ուզեն գիտնալ թէ իրենց պետը ինչ տեսակ նիւթերով շինուած պատուանդանի մը վրայ կեցած է, որպէս զի իրենք ալ նոյնը ընտրեն: — Իբր սկառուռ, ի՞նչ տեսակ նիւթ կը գործածես քու պատուանդանիդ համար, որովհետեւ, պէտք է լաւ ըմբռնեն թէ պատուանդանի մը վրայ կեցած ես եւ քու ասպրեւակերպէդ պիտի դատուիս ուրիշներէն: Ժողովուրդը զձեզ որ տեսնայ, անմիջապէս ձեր ընթացքը եւ սովորութիւնները կը գիտէ, եւ յետոյ կը քննադատէ, եւ կ'որոշէ թէ դուք՝ հաճելի՞ էք իրեն, կամ՝ ձեր ընթացքը գնահատումի արժանի՞ է թէ ոչ:

Թերթիս կողքին վրայ, կը տեսնէք երկու պատկերներ, որոնցմէ առաջինը կը ցուցնէ ուղիղ՝ եւ երկրորդը սխալ պատուանդանը, դուք որոշեցէք թէ կեանքի համար ո՞րն է լաւագոյնը այն երկու պատուանդաններէն:

Ամէն ոք ազատ է ուզած պատուանդանին վրայ ելլելու, սակայն սկառուռ մը կը սպասուի որ առաջինին վրայ բարձրանայ: Բայց Սկառ'ւտ, մինակդ մի՛ բարձրանար, մի՛ կարծեր որ մինակ անձ մըն ես, լաւ խմորով օժտուած, մի՛ երեւակայեր թէ ուրիշներէ աւելի արժանաւոր ես, եթէ այդպէս ընես, քու սկառուտական խոստումդ գործադրած չպիտի ըլլաս: « Բարձրացի՛ր » ուղիղ պատուանդանին վրայ բայց մի՛ մոռնար օգնութեան ձեռք երկարելու երկրորդ պատուանդանին վրայ գտնուող ընկերիդ, համոզէ զայն վար իջնել իր վտանգաւոր դիրքէն եւ « Բարձրացո՛ւր » զայն՝ քու պատուանդանիդ վրայ, իբր քու եղբայրդ: Բնաւ մի վախնար որ՝ ուրիշներ կրնան զքեզ վար ձգել քու գտնուած տեղէդ, բարութեան պատուանդանին վրայ շա՛տ տեղ կայ ամէնուն համար:

Երբ մէկը առաջին անգամ կը գտնուի նշանաւոր անձերու յիշատակին

կանգնուած կոթողներու առջեւ, որոնք հաստատուած են դեռնէն շատ բարձր, բնականօրէն կ'իզարակացնեն թէ արժանիք ունեցող մէկը պէտք է ըլլայ այն անձը, որուն արձանը այսպէս ցուցադրուած է, եւ յիրաւի այդ մեծ արձանը այդ մեծ մարդուն աշխատութեանց վարձատրութիւնն է: Բնական է ամէնքս չենք կրնար ունենալ նշանաւոր արձաններ՝ կանգնուած մեր յիշատակին համար, որով մենք գոհ պէտք է մնանք երբ մարդիկ մեզ համար լաւ խօսին մեր ապրած միջոցին եւ թէ մեր մահէն վերջ:

Սկաուտէ մը կը սպասուի հնազանդիլ սկաուտական օրէնքներուն այն վայրկեանէն, երբ իր խոստումը կուտայ, այսինքն կը բարձրանայ այն պատուանդանին վրայ որ կատուցուած է տասներկու հաստատուն եւ լաւ առաղձներով որոնք կը կազմեն սկաուտական օրէնքները: Սկաուտները պէտք է ապրին իրենց խոստումին բարձրութեանը մէջ, այն որ կը թերանայ իր պարտականութեան մէջ, շուտ վար կ'իջնայ իր պատուանդանէն, սկաուտ մը պէտք է ստիպէ ուրիշները, որ ըսին. « Արժանի է Սկաուտ կոչուելու »: Երբեմն կըրնայ եղբայր մը իյնալ իր պատուանդանէն սակայն երբեք մի խնդար անոր վրայ, ան կրնայ դարձեալ դէպի վեր մագլցել: Քու պարտականութիւնդ է օգնել անոր:

Ձեզմէ եւ ոչ մէկը, առաքինութեան բարձրութեան վրայ գտնուելուն համար ինքզինքը « պալատին թագաւորը » նկատելու կամ հպարտանալու ու շլանալու իրաւունք չունի:

Ժողովուրդը ակնածանօք կը դիտէ զձեզ բարձրացած՝ պատուանդանին վրայ, ուր՝ շատ տեղ կայ ամենուդ համար. օգնութեան ձեռք երկարեցէք ամենուն որոնք ինկած են, բարձրացուցէք զանոնք, եւ այն ատեն դիտողները չկարենալով զսպել իրենց հիացումը, ձեզ համար սահմանուած գնահատութիւնը պիտի ընեն:

Յիշեցէք թէ հեղութեան մէջ մեծութիւն կայ, եւ չկայ անպատուութիւն խոնարհութեան մէջ. միշտ մտածէ քու անձիդ մասին եւ կրկնէ հետեւեալը. « Ինձմէ կը սպասուի հնազանդիլ իմ խոստումներուն, որով պէտք է որ յուսախար ընեմ զանոնք, որոնք՝ ինձի կը վստահին եւ կը պատուեն »:

Փարիզ

« ՀԱՅ ՍԿԱՈՒՏ »



Հ. Մ. Ը. Մ.
ԵՒ



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ՎԱՐՉԱՏՈՒՆԷՆ

Գ. ՆԻՍՏ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄԵՆՈՅ

7 Յունուար, 1935, ժամը 10

Օրակարգ . — 1) Նախորդ նիստի ասենադրութեան ընթերցում եւ վաւերացում :

2) Նախորդ նիստի խիստ կարեւոր որոշումները հաղորդել նամակ — չորջարերականով բոլոր շրջաններու վարչութեանց :

3) Հաշուեքննութիւն « Հայ Սկսոււտ »-ի վարչութեան 1934 տարեշրջանի փակման ակտի :

4) Պիւրօ էմբէրնասիոնալ տը Սփութիզմ Գրանսէի ազնիւ վարիչ տեղակալ Կէոսի մասնաւոր հրաւերով եղած տեսակցութեան դեկլարացիոն՝ մեր արտաքին յարաբերութեանց պաշտօնատարին կողմէ :

5) Վաւերացում Հ. Մ. Ը. Մ.-ի Գրանսայի Շրջանային 11-րդ Համադումարէն ընտրուած Սկսոււտ Գործադիր Խորհուրդի կազմին, որուն անդամներն են՝

Եղբայրներ

Ժ. ՄԻՆԹԱՆՃԵԱՆ Ա. Ատենապետ ,

Տ. ՆՇԱՆԵԱՆ Բ. Ատենապետ (Մարտիրոսյ թղթակից անդամ) ,

Վ. ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ Քարտուղար ,

Ս. ՍԵՐՈՒԵԱՆ Գանձապահ ,

Հ. ՄԵՐԿԵՐԵԱՆ Գոյքապահ ,

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ Հաշուակալ ,

Մ. ՓԱՓԱՋԵԱՆ Խորհրդական (Մարտիրոսյ թղթակից անդամ) :

Նիստը փակուեցաւ ժամը 13-ին :

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ յօդուածագիրներէն գրել միմիայն մէկ էջի վրայ մեղանով, ոչ այնքան խիտ տողերով, յստակ եւ դիւրընթեռնելի գիրով: Խուսափիլ երկարապատում գրութիւններէ. տալ միայն կարկառուն եւ հետաքրքրական կէտեր :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Շարունակութիւն նախորդ քիւէն)

24. **ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՆԱՀԱՆԳՆԵՐ** — Հին ատեն Հայեր, Հայաստանը բաժնած էին երկու մասերու, Մեծ — ՀԱՅԲ և փոքր — ՀԱՅՔ: Մեծ — Հայք ունէր 15 նահանգներ. — 1. Բարձր — Հայք, 2. Զորքորդ — Հայք, 3. Աղձնիք, 4. Տուրուբերան, 5. Մոկք, 6. Կորնէք, 7. Պարսկահայք, 8. Վասպուրահան, 9. Սիւնիք, 10. Արցախ, 11. Փայտակարան, 12. Ուտի, 13. Գուգարք, 14. Տայք և 15. Այրարատ:

25. — **Փոքր — Հայք ունի երեք նահանգներ.** — 1. Առաջին — Հայք, 2. Երկրորդ — Հայք և 3. Երրորդ — Հայք:

26. — **Բայց 17-րդ և 18-րդ դարերուն Թուրքիա ու Պարսկաստան, և ապա 19-րդ դարուն Ռուսիա իրենց միջև վերջնականապէս բաժնելով Հայաստանը, վերջ դրին անոր անկախութեան, այսինքն, կործանեցին զայն:**

27. — **Այսպէս երեք մասերու բաժնուած Հայաստանի իւրաքանչիւր մասը կոչուեցաւ զբաւոյ պետութեան անունով՝ Թրքահայաստան, Ռուսահայաստան և Պարսկահայաստան:**

28. — **Մակայն, Հայաստանի բաժանումը կատարուելէն շատ դարեր առաջ Հայեր Կիլիկիա արչաւելով՝ տեղացի Յոյները իրենց հպատակեցուցած և հոն հիմնած են անկախ պետութիւն մը, որ տեւած է 300 տարի:**

29. — **Հայեր, նախ Կիլիկիա և ապա Հայաստանը կորսնցնելէ վերջ երկար ատեն չկրցին ձեռք ձգել իրենց անկախութիւնը: Մինչև որ Ընդհանուր Պատերազմի վերջաւորութեան մօտ, այսինքն, 1918-ին վերջերը Ռուսահայաստանի մէկ մասը ազատագրելով՝ հոն հիմնեցին այսօրուան Հայկական Հանրապետութիւնը:**

30. — **Ուրեմն, մինչև 1918 թուականը, Հայեր անկախ պետութիւն ունեցած չըլլալով՝ չազատագրուած Հայաստանը կը կոչուէր Պատմական Հայաստան, որուն ազատագրուած մասը կը կոչուի այսօր Արդի Հայաստան, որ 8 1/2 անգամ փոքր է Պատմական Հայաստանէն:**

31. — **Աշխարհազրական սոյն փոփոխութիւններով մեր աշխարհազրու — թեան առարկան կ'ըլլան Թրքահայաստան, Ռուսահայաստան, Պարսկահայաստան, Կիլիկիա և Արդի Հայաստան կամ աւելի պարզ բացատրութեամբ՝ Պատմական Հայաստան, Կիլիկիա և Արդի Հայաստան:**

32. — **Այս փոփոխութիւններով մեր աշխարհազրութեան առարկան կ'ըլլան Թրքահայաստան, Ռուսահայաստան, Պարսկահայաստան, Կիլիկիա և Արդի Հայաստան կամ աւելի ճիշդ՝ Պատմ. Հայաստան, Կիլիկիա և Արդի Հայաստան:**

Ա.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

33. — **Պատմական Հայաստանի սահմաններուն մէջ կը գտնուին Մեծ — Հայք և Փոքր — Հայք: Իսկ Մեծ — Հայքի սահմաններուն մէջ կը գտնուի Արդի Հայաստան:**

Հայաստանը, որ ինչպէս ըսինք, Ռուսահայաստանի մէկ փոքր մասէն կազմուած է :

34. — Իսկ Կիլիկիա ս եւ է կապ չունի Պատմական Հայաստանի հետ, քանի որ Հայեր հոն հիմնուած են կիլիկեան թագաւորութիւն մը, բոլորովին անկախ՝ բուն Հայաստանէն : Թէեւ սխալ բան մը ըրած չենք ըլլար, եթէ Կիլիկիան ալ ընդունինք Պատմ. Հայաստանի մէկ մասը, քանի որ ժամանակ մը Հայկական Երկիր եղած է եւ աշխարհագրականօրէն շարունակութիւնն է անոր :

35. — Բայց, Պատմական Հայաստան ըլլալով հայութեան բուն օրրանը, որ տեւած է խիստ երկար դարեր, մինչ Կիլիկիա ըլլալով Հայերու երկրորդ Հայրենիքը, որ կարճ կեանք մը ունեցած է, սովորութիւն եղած է առանձին առանձին խօսիլ այս երկուքի մասին, որով մենք ալ պիտի հետեւինք այդ սովորութեան :

36. — Թէեւ պէտք չէ մոռնանք, որ Միջերկրական ծովին եզերքը եզոյ խիստ բարեբեր Կիլիկիան, որ կարող է նուազագոյն 8 միլիոն ժողովուրդ ապրեցնելու, չբնագատուած ըլլալով արեւմուտքէն, արեւելքէն եւ հիւսիսէն լեռներով, իսկ հարաւէն ծովով, ոչ թէ միայն ընդունակ էր իր անառիկ դիրքին շնորհիւ իր անկախութիւնը պահելու, այլ սքանչելի ծովին շնորհիւ ալ առեւտրական խիստ կարեւոր կապեր հաստատելու Եւրոպայի, Ասիոյ եւ Ամերիկէի հետ :

37. — Ուրեմն, նախ սկսինք Պատմ. Հայաստանէն եւ ապա խօսինք Կիլիկիոյ եւ Արդի Հայաստանի գլխաւոր քաղաքներուն վրայ :

38. — ՊԱՏՄ. ՀԱՅԱՍՏԱՆ. — Պատմ. Հայաստանի գլխաւոր քաղաքներն են .

39. — ԿԵՍԱՐԻԱ կամ Մաժակ (Գոյսէրի) . — Արդէս լեռան ստորոտը հին քաղաք, որ եղած է Կապադովկիոյ հին մայրաքաղաքը : Ունի աւերակներ եւ հին ամրութիւններ : Նշանաւոր է Ս. Կարապետի վանքը՝ իր վարժարանով :

Շուրջը կան Եւֆարա կամ Էֆէրէ, Կերմիր, Մուննուսուն, Էրֆիլէք գիւղերը :

Հոս կ'աճի մուշակազգիներու ընտանիքէն հայկական տուղտ (Ալթէա Արմէնիագում) անուն բուսական սեւը, որ հազի համար գործածուող սովորական տուղտի (կիմով) տեսակ մըն է :

40. — ՍԵԲԱՍՏԻԱ (Սիվաս) . — Ալիս գետին եզերքը՝ ընդարձակ դաշտի մը մէջ հին ու պատմական քաղաք, ուր թաթարներու արիւնարբու բռնակալը Լէնկթիմուր խան դպրոցական Հայ տղաքը իր կողքին տակը ճղմելէ զատ Հայ հեծելազօրքերը ողջ ողջ թաղել տուած է : (Պատմ. 19) :

Նշանաւոր է Ս. Նշանի վանքը, որ հիմնուած է ԺԱ. դարուն : Իր շուրջ կան Բրգնիկ, Կովտուն, Զառա, Էւն. երբեմնի հայաբնակ գիւղերը, որոնց մէջ այժմ Հայ շգանուիր :


(Շարունակելի)

ՍԿԱՌԻՏԻՆ ԱՆԿԻՒՆԸ

**ՈՒՂԵՑՈՅՑ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

Գ

ՍԿԱՌԻՏԻՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ



Բարիգի Հայ սկաուտները
Այլ գեաններու վրայ .

ԴԱՒԱՆԱՆՔԸ . — Ա . — ՍԿԱՌԻՏԻՆ ԽՕՄՔԸ ՆՈՒԻՐԱԿԱՆ է : Մարդու մը համար իր խօսքը իր պատիւն է . իսկ սկաուտին համար , հիմը սկաուտական առաքինութեանց : Սկաուտին պատիւը կը ստիպէ զինքը արիարար ըսել , այն ինչ որ ճշմարիտ է : Երբ սկաուտ մը իր պատուին վրայ կը խոստանայ , ստիպուած է իր խոստումը յարգել : Եթէ ան ըսէ « պատուոյս վրայ կը խոստանամ » , պէտք է հաւատալ իրեն , իսկ եթէ սկաուտի մը խօսքը տարակոյս կը վերցնէ , լաւ է որ ան բնաւ չի կրէ սկաուտ անունը :

Բ . — ՍԿԱՌԻՏԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ՈՒՂՂԱՄԻՏ է : Սկաուտը հաւատարիմ է Աստուծոյ , իր հայրենիքին , ծնողքին , ինչպէս նաեւ իր պետերուն , ուսուցչին , վարպետին եւ ՄԻՈՒԹԵԱՆ : Հաւատարիմ է նաեւ իր պարտականութեանց եւ անգամ մը որ ստանձնած է զայն , երբեք չի խուսափիր անկէ , եւ մինչեւ վերջը , առանց վարանումի կը կատարէ զայն ուղղամտօրէն : Սկաուտը իր վարքով եւ կենցաղով եւս վստահութիւն պէտք է ներշնչէ բոլորին : Ան հաւատարիմ է նաեւ նիւթապէս եւ բարոյապէս :

Գ . — ՍԿԱՌԻՏԸ ՀՆԱԶԱՆԻ է : Սկաուտ մը գիտէ հնազանդիլ առանց զրկկամակութեան իր ծնողքին եւ գերազաններուն հրամանին : Անոր համար առաքինութիւն մըն է , օրէնքին եւ սկաուտական կանոններուն հնազանդիլը : Սկաուտը , պարզ խօսքով՝ ճշմարիտ կանոնապահ մըն է : Սկաուտը կը հնազանդի նաեւ իր խղճին եւ թոյլ չի տար ինքզինքին յօռի եւ վնասակար արարքներու մէջ զանուիլ :

Գ. — ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՏ ԿՕԳՆԷ ՌԻՐԻՇՆԵՐՈՒՆ: Սկաուտը պատրաստ է իր հանդիսարը եւ հաճոյքը գոհել ուրիշին բարիք մը ընելու համար: Որ եւ է պարագայի սկաուտ մը պիտի կարենայ նկատել թէ ի՞նչ բան լաւագոյն է ընել ուրիշներուն համար, ու պիտի կատարէ դայն: Օրուան մէջ գէթ անգամ մը ուրիշին օգտակար գործ մը կատարելը, սկաուտին պարտականութիւնն է:

Ե. — ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԱՄ Է ԱՄԷՆՈՒՆ, ԵՒ ԵՂԲԱՅՐ ԱՄԷՆ ՌԻՐԻՇ ԸՍԿԱՌԻՏԻ՝ ԱՌԱՆՑ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԽՏՐՈՒԹԵԱՆ: Սկաուտը խտրութիւն եւ դանազանութիւն չի գներ իր նմաններուն միջեւ: Անոնց աւելի կամ պակաս հարուստ, խելացի կամ ուժեղ ըլլալը, պատճառ մը չէ որ, անոնք իրարու հանդէպ արհամարհանքով կամ նախանձով վերաբերուին: Թշնամութիւնք, քէն եւ վրէժխնդրութիւն գոյութիւն չունին սկաուտին համար: Երբ սկաուտը բարիք մը կ'ընէ, խտրութիւն չի գներ անձերու միջեւ, որովհետեւ ամէնուն ալ հաւասարապէս բարեկամ է ան, իսկ երբ ուրիշ սկաուտի մը կը հանդիպի, հոգ չէ թէ օտար, անոր հետ կը վարուի, ինչպէս իր եղբորը հետ: Երբեք նշանակութիւն չունի իրեն համար թէ այդ սկաուտը օտար կրօնքի կամ դաւանանքի կը պատկանի:

Զ. — ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԻՐԹ Է: Սկաուտը քաղաքավար է ամէնուն հանդէպ, կրթութիւնը ընտանիքի եւ ընկերութեան մէջ լաւագոյն կենցաղ մը ունենալու միակ պայմանն է: Անկրթութիւնը, անհասկացողութեանց, վէճի եւ կռիւի ծնունդ կուտայ. կրթեալ մարդը ամէնուն սիրելի կ'ըլլայ, իսկ անկրթը՝ ատելի: Ամէն աեղ եւ ամէն առիթով սկաուտը երբեք չի կորսնցներ իր բարեկրթութիւնը:

Է. — ՍԿԱՌԻՏԸ ՄԱՔՈՒՐ ՀԱՅՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻ: Սկաուտը կ'աշխատի իր մայրենի լեզուն սորվիլ, որովհետեւ լեզուն գիտնալով աւելի կը սիրէ իր հայրենիքը: Սկաուտը ո՛չ օտար եւ ոչ ալ ազատ բառեր կը գործածէ, հայերէն խօսած ատեն:

Ը. — ՍԿԱՌԻՏԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԸ ՍԻՐԷ ԵՒ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ: Սկաուտի մը խիղճը պիտի չի հանդուրժէ չարչարել կենդանիները եւ դանձք ի գուր աեղը սպաննել, եթէ անոնց կեանքը վնասակար չէ մարդկութեան: Իր հաճոյքին կամ գուարճութեանը համար թռչուններու բոյնը չի քրքրեր:

Թ. — ՍԿԱՌԻՏԸ ԶՈՒԱՐԹ ԵՒ ԽԱՆԴԱՎԱՌ Է: Սկաուտը գուարթ է երբ իր պարտականութիւնը լիուլի կատարած է, գուարթ է երբ բարիք մը կը գործէ, գործեալ գուարթ է երբ գժուարութեան մը կամ անյաջողութեան մը առջեւ կը դանուի:

Սկաուտին համար տրանջալը անվայել է եւ ամենագանցուն ցուն անգամ անիկա պէտք է զխմուրէ ժպիտով մը: Դժբախտութեան, ցաւի եւ անյաջողութեան հանդէպ ժպտիլը մարդկային եւ սկաուտական լաւագոյն առաքինութիւնն է եւ շատ անգամ ալ յաջողութեան միակ պայմանը, սկաուտը գիտէ սակայն դանազանել գուարթութիւնը թեթեւաբարոյութենէն:

ԵՐԷՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ — Բ .

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԿԻՐ ԵՐԷՑ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

Երէջ սկսուաներու պաշտօնական քայլերդն է .

Հայ եղբայրներ քէ գունդ ի գունդ
Աշխատանքի մեկի լծուիմք .
Բահն ու բրիչը ձեռին, սէրը կրծքին ,
Աշխատանքի մեկի նետուի՛նք :

Արեւիքից լուսն է ծագում
Եւ Հայաստան ուժգին ցնցում , օ՛ն .
Օն յառա՛ջ , օն ի դաշտ , օն ի բնութիւն
Մեր քրտինձով , աշխատանքով
Ճամբայ բանա՛նք հայ եղբայրց , քան եղ-
բայրց :

(Բահն ու բրիչէն կրկնութիւն , ծանօթ երգի եղանակաւ) :

ԵՐԷՑՆԵՐՈՒ ԹԷՔՆԻՔ ԿԱՐԳԵՐԸ

Ա. — Թեկնածու երէց ըլլալու համար : 1) Քաջածանօթ ըլլալ նորընծայ սկսուալի մը պայմաններուն , եւ կարենալ սորվեցնել զանոնք նորեկի մը կամ թեկնածու սկսուալի մը :

2) Անձնական թէ խմբային առողջապահութեան քաջ ծանօթ ըլլալ :

3) Տասնեւհինգ օր բնակած ըլլալ եւ մինակը կերակուր ու հաց պատ-
րաստել :

4) Մէկ անգամէն՝ աջ ու ձախ ձեռքերով փոփոխակի վերցնել 20 քիլօ
ծանրութիւն :

5) Փոփոխակի նետել 6 մեթր հեռու 7 քիլօ 250 կրամ ծանրութիւն , աջ ու
ձախ ձեռքով :

6) Լողալ 100 մեթր 3 վայրկեանէն :

7) Սուղուիլ 15 երկվայրկեան :

Այն երէցները (թեկնածու) , որոնք առողջական պատճառներով վերսյիշ-
եալ փորձերը չեն կարող կատարել , պարտին Միութեանս բժիշկէն վաւերա-
դիր մը ներկայացնել . այդ պարագային եւ միայն Շրջանային պետի որոշ-
մամբ , ուրիշ մասնադիտութիւններ կ'անցընեն :

Պատրաստել արժէքաւոր ու օգտակար աշխատանք մը (մատուր , Ֆիզիքա-
կան կամ ձեռական) , որ պէտք է ներկայացուի Երէցներու Խորհուրդին , որ իր
քննադատութիւնը կամ դնահատանքը ընելէ վերջ փաղանդի խմբապետին եւ
խորհրդատու խմբապետին կը մնայ , ընդունել եւ կամ սրբադրութիւններ եւ
յուրելում պահանջել : Այս աշխատանքի նկատմամբ , ըստ բուսականի , իհաս
պէտք է ըլլալ , սրղկողի ան ըլլայ գլուխ — գործոց մը :

Թեկնածուի պայմանաժամը վեց ամիս է :

Բ. — ՆՈՐ ԸՆԾԱՅ ԵՐԷՑ

1) Սկսուա Բ . կարգի պայմաններու լրջօրէն վերադադ , եւ կարենալ ու-
սուցանել երկրորդի մը :

2) Ունենալ առողջապահի մասնադիտութիւնը :

3) Սպայակոյտի քարտէսը լրջօրէն աշխատիլ :

4) Մինակը 24 ժամ բանակիլ :

5) Ազդային , քաղաքական , վարչական , խնայողական եւ գինուորական
կազմակերպութեանց քաջ ծանօթ ըլլալ :

6) Տեղական փաղանդի ներքին պայմաններուն (եթէ կան) գոհացում տալ եւ առաւելագոյն մէկ տարուան մէջ անցընել այս պայմանները :

Գ.— ՕՄԵԱԼ « ԵՐԷՅ » ՍԿԱՌԻՏՆԵՐ

1) Նուազագոյն 18 տարեկանը թեւակոխած ըլլալ :

2) Փաղանդին մէջ նուազագոյն մէկ տարի գործունէութիւն ունեցած ըլլալ՝ իբր թեկնածու եւ նորընծայ երէց , ե՛ւ խորհրդատու իմբաստեալն (խ.խ.) ե՛ւ փաղանդի իմբաստեալն (փ.ի.խ.) ճանչցուիլ իբր պարտաճանաչ :

3) Բնական մարզանքներէն հետեւեալները կատարել .

Վագֆ 500 մէքր 1 վայրկեան 40 երկվ . :

Ուժով քարձրութիւն՝ 1 մէքր 20 , աջ եւ ձախ ուժով .

Ուժով երկայնութիւն՝ 4 մէքր , աջ եւ ձախ ուժով .

Չուանէ քարձրանալ՝ 5 մէքր , առանց ուժերու :

4) Ազատարարի պէճը ունենալ :

5) 48 Ժամ մինակը բանակիլ , կերակուր , տեղեկագիր , քարաէս :

6) Տեղական պայմաններ , եթէ կան , լրացնել :

7) Առ առաւելն երեք տարիէն պէտք է աւարտել վերոյիշեալ պայմանները , եւ իւրաքանչիւր անցած պայմանի թիւերն ու թուականը արձանագրել ինքնութեան տոմսին մէջ Խ . Խ . Ի կողմէ ստորագրուած :

Օճեալ Երէց ըլլալու համար պէտք է խոստամնագիր մը ստորագրել , ջրկեանս հաւատարմութիւն խոստանալով Միութեան : Եւ եթէ օրէնքներու դէմ գործէ խոստամնագիր ստորագրողը , արժանի պատիժներու ենթարկուելու յանձնատու ըլլայ իր խոստամնագրով :

ՏԱՐԱԶ .— Երէցներու տարազը պէտք է ըլլայ , եղածին չափ պարզ եւ կրկիկ՝ միօրինակ . գոց կապոյտ էքօսէ գլխարկ , սկաւառին նշանակը աջ կողմը իսկ ձախին՝ Ե . Ս . ն ու Փարշ գաւազանը . բաց սրճագոյն չապիկ կամ կապոյտ Ֆլանէլ (միօրինակ) . կարճ կամ կօլֆ գոց կապոյտ տարատ (միօրինակ) , փողկապը ուղուած գոյնով (միօրինակ) . գորշ կամ գոց կապոյտ գուլպայ (միօրինակ) . սուլիշի կապ՝ կարմիր ու ձախ ուսէն զեղին , կանանչ եւ կարմիր երիզներ . ուսնոցներուն վրայ կանանչ սաուի՝ Ե . Ս . Առմենի վերտառութեամբ . մասնագիտական նշանները , գործադրելու պայմանաւ կարելի է կրել , ստաջին անգամ որ սկաւառական դաւանանքին դէմ գործեն կը զրկուին այդ նշանակներէն :

Պարտաւորիչ են ինֆնուրեան տոմսերը , որոնք Երէցներու կենցաղին հաշիւներն են . ամէն եռամսեայի պէտք է վաւերացուին անոնք Խ . Խ . Էն եւ Շրջ . Պեաէն . իսկ 2 տարին անգամ մը պէտք է փոխուին նորերու փոխարէն :

ՅԱՐԳԱՆՔ .— Երէցները քաղաքավարութեան մասին բժարիներն են : Նախ իրենք կը բարեւեն Երէցները ամէն սկաւառ եւ աստիճանաւոր :

ՓԱՂԱՆԳԸ .— Նշանակութիւն եւ կազմութիւն : Փաղանդը կը բաղկանայ « Երէց » կոչուած նուազագոյն 5 եւ առաւելագոյն 15 երիտասարդներէ : Փաղանդը , հայ սկաւառական շարժման մէկ անբաժան խումբը մասն է : Փաղանդը կը կրէ ազգային նշանաւոր նձի մը , Հիբոսի մը , եւն . անուներ : Փաղանդը մաս կը կազմէ մասնաճիւղային խումբին կամ ենթաշրջանին : Մասնաճիւղային խումբի մը մէջ մէկէ աւելի փաղանդներ կրնան գոյութիւն ունենալ :

(Շար .)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԹԱԻՐԻՉ

Երկար ժամանակ է որ ոչ մէկ լուր չունէինք Կեղերոնից, չափազանց ուրախ ենք, որ վերջապէս Հ. Մ. Ը. Մ. ի Կեղերոնը իր աններելի դրութիւնից, որի մէջ մնացել էր երկար ժամանակ, դուրս է եկել, եւ որ դործի գլուխ են անցել, աշխատելու, դոճարեբելու ընդունակ եւ հայրենիքի ծառայելու ցանկացող եզրայրներ: Մենք այն յոյսը ունենք, որ Կեղերոնական Մարմինը չպիտի հեռուի իր նախորդներին եւ որ մէկ կողմ թողած անձնական ու թայֆայական հաշիւները, ձեռք ձեռքի աուած շրջանների հետ կը սկսի աշխատել միմիայն իր տարագիր, իր ցանուցիր ժողովրդի բեկորներին եւ իր հայրենիքին օգնելու համար:

Մենք եւս մեզ համար ալիպէս ենք մտածում, ամէն, ամէն ինչ սկսաք է դո՛հել յանուն հայրենիքի, յանուն հայ ժողովրդեան:

Մեր Վարչութեան եւ կեանքից նկարներ շուտով կ'ուղարկենք:

1935 թուի սեպտեմբերին դումարուեց Միութեան ընդհ. ժողովը ուր եւ ընտրուեց նոր Վարչութիւնը: Ընդհ. ժողովը վերաքննելով Միութեանս ներքին կանոնադիրը, ենթավարչութիւնների գոյութիւնը համարեց անկարեւոր, այդ կէտը ոչնչացրեց, միաժամանակ մասնաճիւղի անդամների թիւը 5-ից 7-ի բարձրացրեց: Ընտրուած վարչութեան անդամներն են. — Եղբ. ներ՝ նախագահ՝ Մարգիտ Յարութիւնեան, քարտուղար՝ Անդրանիկ Գալուստեան, դանձապահ՝ Բարգեն Եղիսպարեան, գոյքածոցահար՝ Դերենիկ Արբաճեան, հաշուակալ՝ Վահագն Յարութիւնեան, Սկաուտ բաժնի վարիչ՝ Ռուբէն Գրիգորեան, մարդական բաժնի վարիչ՝ Եփրեմ Մ. Գասպարեան:

Տեղի ունեցած են հետեւեալ աշխատանքները՝

Խմբերի կարգաւորում, խմբապետ, փոխ - խմբապետ, տասնապետ եւ դանձապահ նշանակելով. այդ աշխատանքը կատարելուց յետոյ, այժմ հետեւեալ պատկերն է ներկայացնում. Սկաուտական շարժում՝ տասը խումբ իրեն փոխ խմբապետ, փոխ - խմբապետ, տասնապետ եւ դանձիչներով, այժմ 343 հոգի են: Մարդական ճիւղ՝ հինգ խումբ. մէկը աղջիկների, չորսը ազանների. մեծաւ մասամբ արհեստաւոր. խումբերը ունեն իրենց խմբապետը եւ դանձապահը. ընդամէնը 98 հոգի:

Սկաուտական ճիւղի աշխատանքները տարուել են ձմեռը դալուկի եւ սկաուտի գիտելիքները սորվելով. դաշտային աշխատանք եւ բանակում կը սկսուեն եղանակների նպատաւոր լինելու առթիւ:

Մարզական ճիւղի աշխատանքները տարուել են մարզասրահում, դործիքների վրայ գիշերները: Երկու բաժիններում էլ կազմուել է վիճակագրութիւն, վարք, պահուածք, անտեսական եւ կրթական վիճակը ստուգելու համար:

Դասախօսութիւններ եւ դասընթացներ: Մեր անդամների, մանաւանդ մարդական բաժնի, կրթութեան նպատակու համար. արուել է դասախօսութիւններ, եւ գիշերային դասեր, հայերէն, պարսկերէն լիզելից եւ թուարանութիւնից:

Չեռնարկներ: Վարչութիւնս ձեռնարկել է, երկու ցերեկոյթներ, որոնք

եղեւ են ժողովրդական :

Ֆուրպոլ : Յազերը սկսուել են , սակայն մրցումներ տեղի չեն ունեցել :
Ունենք նաեւ սրտքէթ - սօլի խումբ :

Միութեանս աշխատանքները կանոնաւոր տանելու համար , վարձով ենք վերցրել , տեղիս թեմական պարտէզ - դրասարանը :

Միութեանս մշտական նիւթական աղբիւրը կայանում է անդամավճար-
ները , ունենում ենք երբեմն փոքրիկ վիճակախաղեր եւ ցերեկոյթներ , որոնցից
ստացած գումարով հաղիւ կարելի է չինում մեր տարեկան ծախսերը հոգալ :

Մեր թղթակիցը սրոշուած է եղբ . Սարգիս Յարութիւնեանը :

Եղբայրական ջերմ բարեւներով

Ի դիմաց Հ . Մ . Ը . Մ . Ի Պարսկաստանի Շրջ . Վարչութեան

Քարտուղար՝ Ա . ԳԱԼՍՏԵԱՆ

Նախագահ՝ Ս . ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

ԱՐԻՆԵՐՈՒ ՆՈՒՆՃՈՒՄԸ ԴԳՐՈՅՈՒՄ

Արաղանի (Պարսկաստան) Հ . Ազդ . Դոյրոցի Հոգարարձութեան կողմից՝
աշխատասիրութեան եւ վարքի համար արուած 12 դեղեցիկ մետաղներից Ծ-ը
չաճեցին մեր արիները , Յ-ը միայն ոչ - արիները . չնայած որ արիները դոյրո-
ցի աշակերտութեան 47 առ հարիւր տոկոսն են կազմում : Շահել են՝

Արեւուշներ՝ Օրդբ . Ա . Նազարեան (խմբապետահի) , Տ . Մարտիրոսեան ,
Ն . Գասպարեան , Ս . Մաշատեան :

Արիներ՝ Ս . Դաւթեան (Ատեանի անդամ) , Բ . Մարտիրոսեան , եւ Ա .
Դաւթեան :

Գայլուկներ՝ Հ . Նազարեան եւ Վ . Յակոբեան :

Ռ . ՄԱՐՈՒԴԵԱՆ

ԳՐԱԶԻԿԻԱ

ՍԷՆ ԲՆԻՂՈՅԻ Հ . Մ . Ը . Մ . Ը

Ինչպէս ամէն տեղ , նոյնպէս Ս . Բաւլոյի Հ . Մ . Ը . Միութիւնը իր աշ-
խատասիրութեան արժանի պատուը կը քաղէ , արժանանալով դազութիւն օժանդա-
կութեան : Գազութը օրըստօրէ աւելի կը համոզուի եւ կ'ըմբռնէ Հ . Մ . Ը . Մ -ի
գոյտիական կարեւորութիւնը , կը զգայ անոր աշխատանքներուն անհրաժեշ-
տութիւնը , իրրեւ հայ մանուկներու եւ երիտասարդաց մարմնակրթական մար-
մին :

Զի բաւեր միայն , որ ծնողները իրենց դուստրները արձանագրել տան սեւ
դոյրոցի մը , սկսաք է մանուկը պատրաստել ամէն ուղղութեամբ , կրթելով ա-
նոր Ֆիզիքականը : Միայն մաքի կրթութիւնը բաւ չէ լաւ մարդ մը պատրաս-
տելու համար , այլ նաեւ մարմնականը :

Հ . Մ . Ը . Մ -ը տարիներէ ի վեր այս նպատակին է , որ կը ձգտի :

Ս . Բաւլոյի մասնաճիւղը , մասնաւորապէս այս տարի , ջանք չէ խնայած
սկսուածիցմի դազափարը տարածելու դազութիւն մէջ , որու շնորհիւ այսօր
Միութիւնը ունի 80է աւելի աւգամներու կողքին 30 սկսուածներ :

Միութիւնս այսօր հասած է նախանձելի վիճակի մը , շնորհիւ անդամնե-

բու, բարերարներու, զխաակից սպղախիններու, սրտնք նիւթական եւ բարոյախան օժանդակութիւնը վեր է ամէն տեսակ գնահատանքէ :

Վարչութիւնս ներկայ տարեշրջանին հանդանակած է 1668 \$ 000 բէյլ, որուն մասնակցած են 42 սպղախիններ : Այս գումարը յատկացուած է հայ սկսուածներու կարիքներուն :

Վարչութիւնս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ նախարարներուն, որոնք առատաձեւն մասնակցեցան հայ մանուկի բարձրացման վսեմ գործին :

ՍԿԱՌԻՏ

ՊՐԱԶԻԼԻՈՅ ԵՐԶԱՆ Ս. ԲԱԻԼՈՅԻ ՄԱՍՆԱՃԻԴ

Մասնաճիւղս կազմուած է 929 օգոստոսին, անդրանիկ վարչութիւնը միայն Ֆութպօլի մրցումներով հետաքրքրուեցաւ եւ լաւ արդիւնքներ ունեցաւ : Երկրորդ տարեշրջանը աւելի յառաջ երթալով նաեւ հիմը գրաւ Սկսուտական կազմին : Գործի սկսանք 15 սպտանիներով, քիչ ժամանակի մէջ հասցուցինք 40-ի : Ներկայ վարչական կազմը գործի սկսաւ 933 գեկտեմբերին :

Մեր հինգ տարուան գործունէութեան, նիւթական ելքն ու մուտքը եղած է 13,200 Ֆրանս · Ֆրանք :

Մեր վարչութեան կազմն է . — Ատենապետ՝ եղբ. Սահակ Սաշատուրեան, փոխ — ատենապետ՝ եղբ. Վահան Զօրպաճեան, ատենադպիր՝ եղբ. Մեկուհ Զիլինկիրեան, գանձապետ՝ եղբ. Գարեգին Թիւֆէնկճեան, սկսուտ խմբապետ՝ եղբ. Մխաբ Թաղէսեան, Ֆութպօլ՝ եղբ. Թորգոմ Գասարճեան :

Կը յուսանք որ մօտ ատենէն մեզ պիտի ուղարկէք նոր հրահանգներ, ծրարիր — կանոնադիր, մեր գործերուն աւելի կանոնաւոր ընթացք մը տալու համար :

Մասնաճիւղիս գործունէութեան տեղեկատուութիւնները, մեր կողմէ նըշանակուած ԹՊՔ-ակիցին յանձնուած է, կը խոստանայ կանոնաւոր տեղեկ պահել :

Մեր շրջանին մէջ ուրիշ մասնաճիւղ չկայ ներկայիս, պիտի ջանանք նորեր կազմակերպել, արդէն գործի ձեռնարկած ենք, յաջորդով կը դրենք ձեզ :

Սկսուտական շարքերը, բոլորն ալ զգեստաւորուած են, տեղի կ'ունենայ շարաթր երկու գասախօսութիւն. կիրակի օրերը արշաւներ եւ երբեմն բանակում :

Ֆութպօլ · ունինք երեք խումբեր, մեր խաղերուն մեծ մասը յաղթական գուրս կուգանք :

Տեղւոյս մէջ սկսուտական եւ մարզական աշխատութեամբ, Հ · Մ · Ը · Մ · ր պատճառ գարձած է Հայը սիրել տալ տեղացիներուն :

Հանդէս . — Մեծ չութով տօնեցինք Հ · Մ · Ը · Մ · ի տարեկարձը՝ հոճ բազմութեամբ · ժողովուրդի տպաւորութիւնը սքանչելի էր : Կնիկի գումար մըն ալ ապահովեցինք :

Այժմ այսքանով կը բաւականանանք, յաջորդին սպասեցէք մեր լաւ լուրերուն : Ձեզ կը մաղթենք միշտ յարատուութիւն եւ ջերմապէս կը շնորհաւորենք ձեր եռանդն ու համերաշխութիւնը, որոնք ապագայ յաջողութեան բանալիներն են :

Ի դիմաց Ս · Բսուլօի Մ · Նիւղի վարչութեան (Կնիք)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

9 — Ալէքսանտրէք. — Կազմուած 1932-ին, նման միւս մասնաճիւղերու Ալէքսանտրէքին ալ իր սկզբնաւորութեան ունեցաւ ծանր դժուարութիւններ, բայց հետզհետէ հարթելով խոչընդոտները, այսօր հարթ ճանապարհի մը վրայ կը յառաջանայ, եթէ միայն չըլլան հոս ես անմիտ հակա Հ.Մ.Ը.Մ. ահաւաններ, որոնք օգտադործելով իրենց պաշտօնն ու դիրքը կ'ուզեն հակապրոպականտ տանիլ մեր Միութեան դէմ: Այս կարգին է տեղւոյն Ազգ. վարժարանի տեսչութիւնը, որը կը յայտարարէ զպրոցի աշակերտութեան, թէ անոնք որ « Հ.Մ.Ը.Մ. » կ'արձանագրուին պիտի վտարուին զպրոցէն, հակառակ ատոր սակայն Հ.Մ.Ը.Մ.ի անունը համակած է տեղւոյն նորահաս պատանեկութիւնը, որոնք իրենց սրտին եւ զգացումներուն մօտ գտնելով այս ժողովրդական կազմակերպութիւնը, խմբովին անոր կը զինուորագրուին:

Մասնաճիւղը ունի իր կանոնաւոր Փութպօլի խումբը, որը իր կողմից խաղարկութեամբ արժանացաւ այս տարի միջմասնաճիւղային մրցումներու Բ. դասակարգի խումբերու ախոյեանութեան բաժակին: Փութպօլի խումբին հետ Հալէպ եկող վարչականները, ի տես իրենց քոյր մասնաճիւղերու սկաուտներուն, խոստացան յաջորդ տարի մասնակցիլ մրցումներուն կարեւոր թիւով սկաուտական խմբակով մը:

Մասնաճիւղը ունի 35 անդամ, իսկ պիւտձէն կը հասնի մօտ 3,000 Քրանքի:

10 — Անտիոք. — Ալէքսանտրէքի քննադար սանձաքի երկրորդ բազմամարդ քաղաքն է Անտիոք: Համառփիւս ցրուած հայութեան միշտարթուն բեկորները, թէեւ քիչ մը ուշ բայց եւ այնպէս

զգացած են նորահաս երիտասարդութիւնը խանդավառող ու ազգը հայ պահելու նկրտող կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի անհրաժեշտութիւնը նաեւ իր փոքրաթիւ դպրութի մէջ, ու 1932-ին 15 անդամներ ի մի հաւաքուելով կը կազմեն աստամեայ մարմին մը մինչեւ որ իրենց թիւը կը հասնի 25 ու կը գտնան օրինաւոր մասնաճիւղ կապուելով Շրջ. Վարչութեան:

Մասնաճիւղի գործի հիմքը առաւելապէս կը կազմեն Փութպօլի խաղերը: Յարդ ունեցած իր մրցումները ըլլան ատանք օտարներու թէ քոյր մասնաճիւղերու հետ, շատ քիչ բացառութեամբ վերջացած են ի նպաստ մասնաճիւղին: 1933-ին Անտիոք շահած է միջմասնաճիւղային Բ. դասակարգի ախոյեանութիւնը:

Անցեալ տարի կազմած է սկաուտներու փոքրիկ խմբակ մը 18 սկաուտներով: Նոյն տարին ունեցած իր սեփական ահումբը, իսկ այժմ կ'աշխատի ունենալու իր մարզադաշտը:

Անդամներու թիւն է 28, իսկ պիւտձէն՝ 2,000 Քրանք:

11 — Ճարապլուս. — Հազիւ վեց ամիս կ'ըլլայ այս մասնաճիւղի կազմութեան (1934 յունուար), ու Հ.Մ.Ը.Մ.ի անվահեր դրօշը կը ծածանի նաեւ Սուրիոյ հեռաւոր այս փոքրիկ զիւղաքաղաքին մէջ, ուր հաւատաւոր երիտասարդներ ի մի եկած կազմած են Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը, ու անոր կողքին սկաուտներու խմբակ մը: Գործի զլուխ անցնող երիտասարդներու անձնագրահարկէն, ու աշխատելու պատրաստակամութեան քաջ վստահ, կը յուսանք տեսնել աւելի ընդարձակ գործունէութիւն մը մօտ ապագային:

Այժմ մասնաճիւղը ունի 17 անդամ ,
25 սկաուտ :

12 — Պուրնի — Համուտ . — Շրջանի ա-
ճեցող կազմուած մասնաճիւղն է Պուրնի-
Համուտ . Պէջրութի արուարձաններէն
ամենէն բազմամարդը , ուր համախմբու-
ած են պէջրութասայութեան մէկ ըստ-
ուար մասը : Հաղիւ երեք ամիս կ'ըլլայ
կազմութեան , բայց անդամներուն եւ
վարչութեան ցոյց տուած ժրջան աշ-
խատանքները ամենահաստատ երաշխիքն
են ապագային Պէջրութի մասնաճիւղի
կողքին Հ . Մ . Ը . Մ . ի լուսագոյն կեդրոն
մը գտնալու :

Այժմ կը սրահէ Փութագոյի Ա . եւ Բ .
խումբեր , որոնք կանոնաւոր փորձերով
կը մարդուն շուտով գտնալու տիպար
խումբեր :

Մասնաճիւղը այժմ միայն ունի 30
անդամներ , բայց այդ թիւը մօտ ապա-
գային քառասուկու գետին ունի :

13 — Ռաս — ուլ — Այն . — Մեր շրջ-
անի նոր կազմուած վերջին մասնաճիւղն
է այս , ուր՝ կ'աշխատուի աւելի սկաու-
տական շարժում յառաջ բերել , դպրոցնե-
րուն օժանդակելու համար . վասն զի հոն
գտնուող հայերը աւանաւորակ քրտախօս
են կամ թրքախօս , ու հետու են հայաշատ
կեդրոններէ :

14 - 15 — Հայփա եւ Մուսուլ . —
զերը կազմակերպութեան շրջան մը կը
Սուրիոյ եւ Լիբանանի 12 մասնաճիւղե-
րէն դուրս , շրջանիս կապուած են Հայ-
փայի եւ Մուսուլի երկու նորակազմ մաս-
նաճիւղերը , որոնց գործունէութեան մա-
սին տակաւին ոչինչ կարելի է գրել , ո-
րովհետեւ թէ՛ մեր շրջանէն հետու են եւ
թէ՛ նոր հիմնուած ըլլալով , մասնաճիւ-
րոյրեն : Կը ջանանք որ նոր մասնաճիւ-
ղերու յաւելումով՝ Իրազ — Պաղեստինեան
շրջան մը ստեղծուի :

Շրջանային վարչութիւն . — Սուրիոյ
եւ Լիբանանի Շրջ . վարչութիւնը , ընտ-
րուած Գ . րդ Պատգամ . Ժողովէն եւ երկու

տարուան համար , կը գտնուի Պէջրութի
մէջ , որուն մաս կը կազմեն : —


Տարբ . Բենիամին Գուլագեան՝ Ատե-
նապետ , ՊՊ . Սուրէն Փափախեան՝ Ատե-
նապետ , Սննիկ Պէօճէքեան՝ Գանձա-
պահ , Ալպէր Յակոբեան՝ Հաշուապահ ,
Խորէն Սուքիասեան՝ Բ . Ատենապետ ,
Սիմոն Թէրճանեան՝ Սկաուտ . Շրջ .
Խմբապետ , Յովհաննէս Շահինեան՝ Աթ-
լէթիք եւ Զութագոյի Շրջ . Խմբապետ :

Շրջ . վարչութեան գործը եղած է ,
իրը շրջանի վերին ու պատասխանատու
մարմին , հսկել « Հ . Մ . Ը . Մ . » ի ծրա-
դիր — կանոնադրի անթերի գործադրու-
թեան , հսկել մասնաճիւղերու ընդհանուր
գործունէութեան վրայ ուղղութիւն տալ
անոնց մարդական դանապան ձեռնարկնե-
րու մէջ ու կարելի սահմաններուն մէջ օ-
ժանդակել ձեռնարկի յաջողութեան , քոյր
մասնաճիւղերու մէջ յարաբերութիւն մը-
շակել , ու դանոնք սերտօրէն կապելու ի-
րարու , ու ապա աշխատիլ Հ . Մ . Ը . Մ . ի
այս հոյակապ ու վսեմ շարժումը աւելի
տարածել ու խորացնել հայ ժողովուրդին
մէջ :

Ահա Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Հ .
Մ . Ը . Մ . ի գործունէութեան համառօտ
մէկ պատկերը :

Ներկայացնելով մեր այս գործունէ-
ութիւնը Հ . Մ . Ը . Մ . ի կեդր . վարչու-
թեան , Սկաուտ . վերին Մարմնէն , մեր
բոլոր քոյր մասնաճիւղերուն եւ հայ ժո-
ղովուրդին , մեր նպատակն է ըսել , թէ Հ .
Մ . Ը . Մ . ը հայ ժողովուրդի ծով ցաւե-
րուն ու անոր մատաղ սերունդին այլա-
սերման վասնզին դէմ իր ուժերուն նե-
րած չափով իր դոյզն աշխատանքը կը
այս համերաշխ գործակցութիւնը այնքան
աւելի բեղմնաւոր կ'ըլլայ գործը :

Ի դիմաց Սուրիոյ եւ Լիբանանի
Շրջ . վարչութեան՝
Յ . ՇԱՀԻՆԵԱՆ



ԼՈՒՐԵՐ

ՄԿԱՌՈՒՏԱՆ-ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. — Հոկտ. 6-ին Երեւանի մարզարանի ընդարձակ հրապարակին վրայ տօնուած է 8 — 10,000 սկաուտներով սկաուտական կազմակերպութեան 13-րդ տարեդարձը: Մաղեր, մրցումներ եւ սկաուտ. աւանդական խարոյկ մեծ խանդավառութեամբ տեղի ունեցած են: Իսկ 18 սեպտ. ի մէջ տօնուեցաւ մարզական օրը, որուն մասնակցած են 20,000 հոգի, մինչ անցեալ տարի նոյն առթիւ 12,000 հոգի: Անցեալ տարի Հայաստանի կազմակերպուած մարզիկներուն թիւն էր 40,000, այս տարի՝ մօտ 72,000:

* Հանգստանալու համար Մաղկաձոր մեկնած 1900 սկաուտները եւ Ստորջրի մօտերը գտնուող 150 սկաուտները վերադարձած են այդ գեղածիծաղ վայրերէն:

ԵԳԻՊՏՈՍ. — « Հաւանարար ոչ մէկ մարզական մարմին, ոչ մէկ հանդէս չէ ունեցած երբեք այն բացառիկ եւ արտակարգ յաջողութիւնը, զոր արձանագրեց Երէկ, 14 հոկտ., Հ. Մ. Ը. Մ. ի տեղւոյս մասնաճիւղը, կատարելով իր նոր մարզավայրին բացման հանդէսը: Աւելի քան 1500 հոգի, կանուխէն եկած էին իրենց ներկայութեամբ քաջալեր հանդիսանալու Հ. Մ. Ը. Մ. ի քաջարի մարզիկներուն »: « Մարզիկներուն զինուորական կեցուածքն ու անոնց ընծայած յարգանքը եղան խիստ տպաւորիչ »: Կը գրէ « Արեւ »:

ՊՈՒԼԿԱՐԻԱ. — Պուրկաղի Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը կազմակերպած է սկաուտական հանդէսներ եւ երեկոյթներ, որոնք յաջողութեամբ սլակուած են: Պուրկար. Սկաուտ. կազմակերպութեան պետերէն Պր. Վ. Սթօյչէվ, ի պատիւ իրեն սարքուած երեկոյթին մէջ մեծ գովեստով արտայայտուած է հայ սկաուտներու աշխատանքին եւ գործունէութեան մասին:

Այդ բոլորէն յետոյ կազմակերպուած մարզահանդէսին առթիւ 70 — 80 սկաուտներու երգման եւ խոստման հանդիսաւոր արարողութիւնը կատարուած է Հ. Մ. Ը. Մ. ի մարզադաշտին մէջ, ուր տեղի ունեցաւ մարզահանդէսը, ի ներկայութեան ծնողքներու: Նորութիւն մըն էր ազջիկ — սկաուտներու (կայտերու) աթլէթիկ խաղերը:

ԱՄԵՐԻԿԱ. — 21 հոկտ. ին Ֆիլատելֆիոյ մէջ տեղի ունեցաւ մրցում մը Հ. Մ. Ը. Մ. ի եւ Հ. Յ. Դ. Յեղակրօններու միջեւ: Երկուական նշանակէտով հաւասար եկան 1000-ի մօտ հայ եւ օտար հանդիսատեսներու խանդավառ ծափահարութեան մէջ:

(Շարունակելի)

ՓՈՒՆԱՆ ՍՏԱՑԱԳՐԻ

Փ Ա Ր Ի 2	Ֆր :
Կօնէսի սկաուտներէն՝	22.40
Փարիզի սկաուտներէն	125 —
Ալֆոնսի սկաուտներէն	22.50
Երէց սկաուտներէն	15 —
Շուազի սկաուտներէն	15 —
Թաղէոսեան Շարլ	15 —
Գէորգ Կարապետեան	20 —
Աշնեան Ալպէն	15 —
Մ Ա Ր Ս Է Յ Լ	
Մ. Փափագեանի միջոցաւ՝ սկաուտներէն	20 —
Մ. Փափագեան	15 —
Կ. Մարութեան	15 —
Պ. Ֆերիատեան	15 —
Գ. Անոբեկեան	15 —
Յ. Զերֆէզեան	15 —
Յ. Խրլաբեան	15 —
Ժ. Տէմիրբեան	15 —
Յ. Տէմիրբեան	15 —
Վ. Շամլեան	15 —

Խ. Տէր Յակոբեան	15 —
Գ. Դաւիթեան	15 —
Յ. Տէր Յակոբեան	15 —
Յ. Մալաբեան	40 —
ՍԷՆ - ՄՕՐԻՍ	
Յ. Պաղտիկեան	7.50

« ՀԱՅ ՍԿԱՈՒՏ » ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Վերատառութեամբ պիտի դնենք այն անունները, որոնք ազնուութիւնը կ'ունենան, պաշտօնաբերքս քաջալերելու, բաժանորդագրուելով՝ ու եւ է հայ հաստատութեան մը կամ վարժարանի մը ի նպատակ : Այդպէսով տարածելու զայն եւ նիւթապէս օգնելու համար անոր ծաւալումին :

**

ՄԱՐՍԷՅԷՆ՝ Պր. Յ. Մալաբեան մէկ տարուան « ՀԱՅ ՍԿԱՈՒՏ » կը նուիրէ Սիմոն Ճամբեանի՝ Պուլկարիա եւ Նորայր Քիրազեանի՝ Պուլկարիա :

„ՀԱՅ ՍԿԱՈՒՏ,,Ի 1934 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

	Մուտք	Ելք	Կշիռ
31 դեկտ. 1934			
Նուիրատուութիւնք	944 40		
Բաժանորդագրութիւնք	1310 —		
Զեռֆէ ծախուած	2243 50		
Փոխատուութիւնք	1343 90		
Գրասենեակի պիտոյք		144 15	
Տպագրութիւնք		4275 —	
Քիշէ		479 50	
Առաքում		716 60	
Նամակագրութիւնք		106 40	
	5841 80	5721 65	=====
Պատրաստ դրամ			120 15



Ս Տ Ա Ց Ա Ն Ք

- ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏ .— Երկշարթաթերթ , Երեւան :
- ԱՐՄԵՆԻԱ .— Շարթաթերթ , Պուէնոս - Այրէս :
- ՄՇԱԿ .— Երկօրեայ թերթ , Ֆրէզնօ — Քալիֆօրնիա :
- ՀԱՅ - ՍԻՐՏ .— Շարթաթերթ , Մարսէյլ :
- ՀԱՅ - ՄԱՄՈՒԼ .— Անկախ շարթաթերթ , Ռուժանիա :
- ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ .— Օրաթերթ , Երեւան :
- ՎԷՄ .— Հանդէս մշակոյթի եւ սրտամութեան , Փարիզ :
- ԵՓՐԱՏ .— Անկախ հայաթերթ , Հալէպ :
- ՊԱՆՔԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ .— Ազգային , հասարակական եւ դրական շարթաթերթ , Սօֆիա :
- ԱՐԵՒ .— Օրաթերթ՝ քաղաքական , դրական եւ անտեսական , Գահիրէ :
- ԱՊԱԳԱՅ .— Քաղաքական եւ հասարակական օրաթերթ , Փարիզ :
- ՀԱՅՐԵՆԻՔ .— Օրաթերթ՝ ազգային , դրական , քաղաքական եւ հասարակազիտական , Պոսթըն (Ամերիկա) :
- ԵՐԿՈՒՆՔ .— Պաշտօնաթերթ Չ . Ո . Միութեան , Փարիզ :
- ՀԱՅ - ԲՈՅԺ .— Ժողովրդական ամսաթերթ բժշկութեան եւ առողջապահութեան կամ Տունին Բժիշկը , Փարիզ :
- ՎԵՐԱՅՆՈՒՆԴ .— Քաղաքական , հասարակական եւ դրական անկախ շարթաթերթ , Թէհրան :
- ԱԼԻՔ .— Ազգային , դրական եւ քաղաքական շարթաթերթ , Պարսկաստան :
- ԱՐՓԻ .— Հայ ընտանեկան սարբերականը : Միացեալ Նահանգներ :
- ՄԻՈՒԹԻՒՆ .— Պաշտօնաթերթ Հ . Բ . Ը . Մ . Ի : ԻԳ . տարի , թիւ 170 , նոյնամբեր - դեկտեմբեր : Փարիզ :
- ՀՕԿ .— Օրկան արտասահմանեան Հօկերու , Փարիզ :
- ԱՆԱՀԻՏ .— Հանդէս մտածման եւ արուեստի , Փարիզ :
- ԲԱԶՄԱՎԷՊ .— Հանդիսարան , բանասիրական , դրական - զիտական , բարոյական : Վենետիկ :

